ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Համարակալված բառերում բաց թողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Վատ սալարկվա-(1), խորդուբոր-(2), ջրափոսերով ու ա-բակույտերով(3) պատված փողոցների անհրապույր պատկերը նրան հիշեցրեց ի-ը(4) տարի առաջ այստեղ կատարած իր առաջին այցը, երբ ասորի առևտրականները, հնդկական փ-ոսկրից(5) սարքված երկփե-կ(6) սր-ապատկերներից(7) ու զանազան իրերից բացի վաճառում էին ավետարանիչների և առաքյալների գրչին պատկանող կեղծ ուղեր-ներ(8) ու թղթեր: Դրանք անհայտ կեղծարարի խունացած բն-րինակից(9) արտագրում էր տասներկուամ-(10) մի պատանի:

1) 3-ղ, 6-ղ, 8-ծ, 9-օ
2) 2-դ, 5-ղ, 6-ղ, 10-յա
3) 1-ծ, 4-նն, 5-ղ, 7-բ
4) 1-ծ, 7-բ, 8-ծ, 10-յա

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:**

1) առ(այն), Սան(Մարինո), դուրս(բերել), դեմ(հանդիման)
2) կաս(կարմիր), ամեն(մի), ծայրից(ծայր), այսօր(նեթ)
3) մեջք(մեջքի), ի(բարօրություն), քար(կոծել), դիցուք(թե)
4) հարյուր(վեց), հինգ(հարյուրանոց), թեր(և)դեմ, չորս(հինգերորդ)

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *է(ե)* ձայնավորի հնչյունափոխություն կա:**

1) շինական, նշաձև, հանդիսատես, տիրուհի
2) մտնել, միգանուշ, կիսանդրի, գիտակցաբար
3) իշայծյամ, գնացուցակ, գիսավոր, շիկակարմիր
4) իջևանատուն, կիզանուտ, գիշակեր, իգական

4 **Ո՞ր շարքի բառերի և բառաձևերի բոլոր վանկերն են բաց:**

1) ուրախանայի, նյարդային, հեռանալու, երեկոյի
2) հնամենի, ենթակա, առաքինի, բացովի
3) հերոսավեպի, կատու, վարդապետի, գինի
4) համատեղելի, լուսաբացի, հեղեղելու, պատանի

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) անիմաստ, անմիտ, անկաշկանդ, անհեթեթ
2) դրվատել, կշտամբել, պախարակել, դատափետել
3) համայն, ամենայն, ամբողջ, բովանդակ
4) աստանդական, ասպնջական, հյուրընկալ, վանատուր

6

Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն կա:

1) **աղանդ** – տվյալ եկեղեցու դավանանքից շեղվող ուսմունք, **արոր** – հող հերկելու գործիք
2) **պաքսիմատ** – չորացրած հաց, **օշարակ** – մրգահյութի զովացուցիչ ըմպելիք
3) **դերվիշ** – մահմեդականների թափառական կրոնավոր, **անմեկին** – անբացատրելի, անլուծելի բան
4) **աղորիք** – հացահատիկ աղալու մեքենա, **նյութել** – որևէ դավանության հետևել

7

Տրված բառերից ո՞րի կազմությունն է՝

արմատ+ածանց+արմատ (առանց հոդակապի):

1) հատկապես
2) հարսնատես
3) շրջանավարտ
4) բերքահավաք

8

Ո՞ր նախադասության մեջ բառագործածության կամ բառի կազմության սխալ կա:

1) Շախմատային մրցաշարն ավարտվեց հօգուտ հայ շախմատիստների:
2) Երբեմն այնքան ուժգին էր ձգում սանձը, որ ձին գիրք կանգ էր առնում:
3) Մենք ցանկանում ենք, որ ձեռնարկության սննկացումը դաս լինի մյուսներին:
4) Աղջկան տեսնում էր թե չէ, միանգամից անակնկալի էր գալիս:

9

Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն գոյականների համարները, որոնց հոգնակին կազմվում է *-եր* վերջավորությամբ.

1. դրամահատ, 2. ստուգայց, 3. նիզակակիր, 4. հակաթույն, 5. ջրաշիթ, 6. ազնվայր, 7. պատշար, 8. աստղագետ, 9. ատամնաշար:

1) 1, 3, 5, 6, 8
2) 2, 3, 6, 7, 8
3) 2, 4, 5, 6, 9
4) 1, 2, 4, 5, 7, 9

10

Ո՞ր տարբերակում հարկադրական եղանակի բայաձև *չկա:*

1) Պիտի կրկին դասը սերտեն իրենց սիրո՝
   Ըստ աստղային այբուբենի:
2) Եվ պե՞տք է արդյոք
   Քեզ միշտ ունենալ իմ կողքին:
3) Նա պիտի մեր առաջին
   Ու վերջին սերը լինի:
4) Տարիներ հետո նա պիտի դառնա
   Մի ժողովրդի ազնիվ կենսագիր…

11 **Ո՞ր տարբերակում մակբայ *չկա:***

1) Այնտեղ՝ կապուտակ ջրերի ծոցում, իր խաղաղ օրերն էր անցկացնում էն քաջն անվեհեր:
2) Երազ աշխարհում Ամեն բան հավետ
   Գալիս է, գնում Ու ցնդում անհետ:
3) Մենք դիտմամբ փորձում էինք ջղայնացնել նրանց, սակայն չէր հաջողվում:
4) Մեր վարպետներն են հնուց տուֆ սիրել և այն վերածել նախշազարդ քարի:

12 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Բայց այդ մեծ քարայրում, ... սև ջուր է դուրս հորդում, իբրև թե ապրում է օձերի թագավորը՝ գոհարապատ թագը գլխին:

1) որից
2) քանի որ
3) թեև
4) ինչով

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:**

1) ընդմիջում, օձաձուկ, ծունկ, ձմեռ
2) աշուն, շարժում, լեռ, խիզախություն
3) նախադուռ, գումարում, արյուն, նուռ
4) դերանուն, ամառ, շարժում, օրոր

14 **Ո՞ր բարդ նախադասության կազմում միակազմ նախադասություն կա:**

1) Մթնում էր, երբ մենք հասանք լեռան ձյունապատ գագաթին:
2) Եկել էր ինձ մոտ, որ գործի մանրամասները քննարկենք:
3) Խոսելը նրա սիրած զբաղմունքն է, բայց շատ է այն չարաշահում:
4) Ոչ ոք չկար. լսվում էր միայն մեղուների բզզոցը:

15 **Տրված նախադասություններից որո՞ւմ բաղադրյալ ստորոգյալ *չկա:***

1) Մոտ էր այն օրը, երբ գործերս ավարտին պիտի հասցնեի:
2) Բաճկոնս փոքր-ինչ մեծ էր, ու ես նեղվում էի:
3) Երկու ժամ այդպես քարացել էի՝ ճոճաթոռի մեջ կծկված:
4) Հենց սա է այն տղան, որ այդքան աղմուկ է հանել:

16 **Ո՞ր նախադասության մեջ է որոշիչն արտահայտված դերանունով:**

1) Այդպես անցան շատ տարիներ:
2) Տեսավ, որ ձիավորների խումբն իրենց է մոտենում:
3) Քաղաքը, ուր անցավ իմ մանկությունը, քարտեզների վրայից չի անհետացել:
4) Նրա ծննդյան տարեդարձին մասնակցում էին բոլոր ընկերները:

17 **Ո՞ր նախադասության մեջ կոչական կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Եղկելի մարդկանց վատ գործերը փոշի կդառնան…
2) Այո ես պատրաստ եմ կրելու իմ ճակատագիրը:
3) Դուք որոշեք ձեր անելիքը:
4) Բարի լույս լսում է պարոն Գեորգը հարևան քո այգուց ինչ կա ինչ չկա:

18 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Ես ասացի, որ նորություն չունեմ, և սկսեցի զննել սենյակը, որ մի շատ աղքատիկ, անզարդ և նույնքան էլ մութ սենյակ էր:



19 **Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *Նա հետևում էր, թե ինչպես է աղջիկը շշերը դասավորում սփռոցի վրա:*
   Նա հետևում էր շշերը սփռոցի վրա դասավորող աղջկան:
2) *Եթե մի քիչ ավելի հեռու լիներ, նրա շարժումները չէին երևա:*
   Մի քիչ ավելի հեռու լինելով՝ նրա շարժումները չէին երևա:
3) *Եթե հեռանալը հեշտ լիներ, Գրիգորյանը վաղուց հեռացած կլիներ գյուղից:*
   Գյուղից հեռանալը հեշտ լինելու դեպքում Գրիգորյանը վաղուց հեռացած կլիներ:
4) *Ինչ որ իրեն պետք էր լինում, նա այդպես կատակով վերցնում էր:*
   Իրեն պետք եղածը նա այդպես կատակով վերցնում էր:

20 **Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Ձորի բերանին կտրուկ զառիթափի տակ էր կանգնած եղբայրը գայլի համար լարված թակարդը ձեռքին:
2) Հերթապահ կնոջ մի կարճ հայացքից ես հասկացա ինչ է մտածում նա մեր մասին:
3) Աղջիկը փրկել է նկարը և բավական երկար ժամանակով հեղինակի ընտանիքը նյութական նեղ կացությունից հանել:
4) Նա միլիոնատիրոջ որդի էր ուժեղ երկրի ներկայացուցիչ:

21 **Ո՞ր միտքը *չի* հակասում տրված տեքստի բովանդակությանը:**

Հնդկեղեգը շատ թեթև, ճկուն և ամուր խոտաբույս է: Աճում է տաք երկրներում, ու թեև նրա հիմքի հաստությունը սովորաբար 30 սմ-ից չի անցնում, սակայն որոշ հնդկե–ղեգներ աճում և հասնում են մինչև 40 մ բարձրության: Հնդկեղեգն աճում է տաք երկրներում, ուր շատ են արևն ու խոնավությունը: Հաճախ այն անանցանելի մացա–ռուտներ է առաջացնում. բներն այնքան մոտ են լինում միմյանց, որ նման անտառով չես անցնի: Ընդ որում, այդ մացառուտները կարող են առաջանալ այնտեղ, ուր մի քանի օր առաջ ոչինչ չկար: Կովկասում աճող հնդկեղեգի հասակը մեկ օրվա ընթաց–քում ավելանում է 75 սմ-ով, իսկ իր հայրենիքում՝ Վիետնամում աճող հնդկեղեգինը՝ անգամ մինչև 2 մ-ով: Հնդկեղեգը լայնորեն կիրառում են տնտեսության մեջ. նրանից տներ, կամուրջներ, ջրմուղներ են կառուցում, կահույք ու թուղթ պատրաստում, իսկ մատղաշ ընձյուղները օգտագործում են նաև սննդի մեջ:

1) Հնդկեղեգի մատղաշ ընձյուղները շատ հարմար են կահույք կամ թուղթ պատրաստելու, ինչպես նաև սննդի մեջ օգտագործելու համար:
2) Հնդկեղեգի հայրենիքում՝ Վիետնամում միայն կարող են հանդիպել 40 մ բարձրության հասնողներ:
3) Հնդկեղեգի աճման համար բարենպաստ պայմաններ են տաքությունն ու խոնավությունը:
4) Հնդկեղեգի ծառերը սովորաբար միայնակ են աճում:

22 **«Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ *չկա:***

1) Բերդի կառուցման ժամանակ Սանասարը շինարարությամբ է զբաղվում, իսկ Բաղդասարը միայն որս է անում:
2) Մեծ Մհերը մենամարտում սպանում է Մըսրա Մելիքին և տիրում Բաղդադին:
3) Ամենահաղթ Դավիթը սպանվում է Չմշկիկ Սուլթանի թունավոր նետից:
4) Փոքր Մհերը ոչնչացնում է Կոզբադինի թոռներին, որոնք ուզում էին հարկատու դարձնել Սասունը:

23 **Ա. Բակունցի «Միրհավ» պատմվածքի վերաբերյալ ո՞ր պնդումը ճիշտ *չէ:***

1) Սոնայի ամուսնությունից հետո Դիլանը և Սոնան այլևս երբեք չեն հանդիպում:
2) Դիլանը և Սոնան մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր աննկատ:
3) Սոնան ամուսնությունից մեկ տարի հետո մահանում է:
4) Դիլան դային Սոնայի մահից հետո ամուսնանում է, բայց մինչև խոր ծերություն հիշում է Սոնային:

24 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Իջնում էին խոհուն, խոնարհ
Դեզերի ուսին
Մի կաթնահունց երկնակամար,
Մի..... լուսին:

1) գունատ
2) ծերատ
3) կիսատ
4) փայլատ

25 **Ո՞ր հատվածն է Պ. Սևակի «Վարք մեծաց» բանաստեղծությունից:**

1) Սերում են նրանք և այն ծերուկից,
   Որ նախընտրում էր ապրել տակառում:
2) Նա օտար հրի ճարակի դիմաց
   Մեր ինքնությունը կոփեց ու կռեց…
3) Նրանք ծնվում են իրենց ծնողի անօգնությունից,
   Որպեսզի դառնան նոր զորեղություն:
4) Դու, որ սայթաքել ու վայր ես ընկել,
   Ընկել ես, սակայն երբեք չես ծնկել…

26 **Պնդումներից որո՞ւմ սխալ *չկա:***

1) Ավ. Իսահակյանի «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծությունը գրված է «Սասնա ծռեր» էպոսի հազարամյակի առիթով:
2) Լ. Շանթի «Հին աստվածներ» դրամայի հիմքում ընկած են հայ հնագույն առասպելների սյուժեները:
3) Դ. Վարուժանի «Ցեղին սիրտը» ժողովածուն բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինը կոչվում է «Սարսուռներ», երկրորդը՝ «Կրկեսին մեջ»:
4) Հայ նորագույն գրականության հիմնադիրներն են Ե. Չարենցը և Վ. Տերյանը:

27 **Տրվածներից ո՞րը հիշատակված *չէ* Դ. Վարուժանի «Հարճը» պոեմի՝ Նազենիկի մարմինը բարդու տակ ամփոփելու տեսարանում:**

1) Արամազդ աստվածը
2) սիրենների կղզու հավերժահարսերը
3) անտառի Դիցանույշը
4) անտառաբնակ չորս քուրմերը

28 **Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի ո՞ր հերոսն է պոեմի դրվագներից մեկում նկարագրվում հետևյալ կերպ.**

Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եվ կերպարանքը փոխված է բոլոր:

1) Սարոն
2) ծերունին
3) Մոսին
4) Անուշը

29 **Ո՞ր տողը Մ. Մեծարենցի «Սիրերգ» («Գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՜ն») բանաստեղծությունից *չէ:***

1) Համբույրիդ, գիշե՜ր, պատուհանս է բաց
2) Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի՜
3) Համբույրներ կու գան հովեն ու ծովեն
4) Լուսեղեն ճամփեն ես կանցնիմ գինով

30 **Բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակի ստեղծագործությունից է:**

ա. Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով…
բ. Դու պիտի ծաղկի՛ս, երկի՛ր հայրական,
Քո ոգով, ոճով և բարձրագլուխ,
Դու պիտի հնչես, հնչես հաղթական,
Իմ հին հայ լեզու՝ քա՛ղցր ու սրտաբո՛ւխ:
գ. …Բայց հրկեզ հոգիս մորմոքում այս տոթ
Հավատում է դեռ քո առավոտին…
դ. Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի,
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան:

1. Ե. Չարենց
2. Ավ. Իսահակյան
3. Հ. Թումանյան
4. Վ. Տերյան

1) ա-3, բ-2, գ-1, դ-4
2) ա-1, բ-2, գ-4, դ-3
3) ա-3, բ-2, գ-4, դ-1
4) ա-2, բ-3, գ-4, դ-1

31 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ի՞նչ է հրամայում Հազկերտը Վարդանին նախարարների կեղծ ուրացությունից հետո:**

1) Հայաստանում մեհյաններ կառուցել
2) աջակցել Վասակին ձեռնադրելու արքա
3) մասնակցել քուշանների դեմ մղվող պատերազմին
4) հազարապետի հետ մեկնել Բյուզանդիա

32 **Ավ. Իսահակյանի ո՞ր ստեղծագործությունն է ավարտվում հետևյալ տողով.**

«Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով...»:

1) «Համբերանքի չիբուխը»
2) «Լիլիթ»
3) «Սաադիի վերջին գարունը»
4) «Հավերժական սերը»

33 **Ե. Չարենցի նշված ստեղծագործություններից քանի՞սն են բանաստեղծություն.**

«Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում», «Ես իմ անուշ Հայաստանի», «Դեպի լյառը Մասիս», «Երբ էս հին աշխարհը մտա…», «Հեռացումի խոսքեր», «Հարդագողի ճամփորդները», «Էլի գարուն կգա…», «Կուզեմ հիմի փչե զուռնեն…», «Սոմա»:

34 **Քանի՞ բառակապակցության մեջ մեծատառի գործածության հետ կապված սխալ կա.**

Կալիֆոռնիայի Նահանգ, Լոպե Դե Վեգա, Խոսրովի արգելավայր, Հուդզոնի ծոց, Կենտրոնական Եվրոպա, Խորենացու փողոց, Կարելական Հանրապետություն, Մեքսիկայի Միացյալ նահանգներ, Լուիզ Սիմոն-Մանուկյան, Պողոս Առաքյալ:

35 **Նախադասություններից քանի՞սն են համառոտ:**

- Իսկ ժողովուրդը տեղից տեղ է թափառում:
- Չէ՛, հա՛յր սուրբ, ամբոխը չի հանգստանա:
- Ճարտարապետին կանչե՞մ, հայրի՛կ:
- Անշուշտ, տարակուսանքները գլուխ էին բարձրացրել:
- Քաջերի սահմանը իրենց զենքն է:

36 **Բառերից քանի՞սն են *կրկնավոր* բարդություն.**

լեփ-լեցուն, գլուխ տալ, նետ-աղեղ, տուն-թանգարան, ման-չման, մեծ ու փոքր, մարդ-մուրդ:

37 **Անկանոն բայերից քանիսի՞ տվյալ ձևերը կանոնավոր կազմություն ունեն.**

տե՛ս, անելու եք, վեր կացան, չանես, ասում են, դառնալու են, տո՛ւր, եկել է, առե՛ք, կթողնեք:

38 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Մենք եղեգների մեջ թաքնված՝ հետևում էինք այդ թռչունների խելացի որսին:
- Բայց վերջում հանկարծ անհանգստացավ, ու խղճի՝ մի պահ քնած խայթը նորից արթնացավ:
- Առջևից գնում էր տարեց որսորդ Ավետը, նրա հետևից՝ Գարեգինը, իսկ վերջում՝ խմբի ամենակրտսեր անդամն էր՝ Աշոտը:
- Ինքը դուրս եկավ, մոտեցավ գետի հուռթի կանաչով ծածկված ափին ու նստելով այնտեղ ընկած մի փտած գերանի՝ սկսեց անթարթ հայացքով դիտել շառաչուն գետի հաստատուն վազքը:
- Տարտամ քայլերով անցնում էր նա հյուրանոցի առջևով և շուռ գալով՝ տեսավ շքամուտքից դուրս եկող մի մարդու՝ վիթխարի գամփռի շղթան ձեռքին:

39 **Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարբերակների համարները:**

Իշխանը անմիջապես ճանաչեց նրան, որովհետև ճրագը նա էր բռնել. այդ անակնկալ հանդիպումը տխրեցրեց իշխանին:

1. **ճանաչեց** – պարզ ստորոգյալ, **նրան** – հանգման անուղղակի խնդիր
2. **ճրագը** – ուղիղ խնդիր, **բռնել էր** – բաղադրյալ ստորոգյալ
3. **այդ** – որոշիչ, **հանդիպումը** – ենթակա
4. **տխրեցրեց** – պարզ ստորոգյալ, **իշխանին** – հանգման անուղղակի խնդիր
5. **իշխանը** – ենթակա, **որովհետև** – պատճառի պարագա

40 **Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.**

1. զինավարժանք, 2. ձեղնահարկ, 3. մատուցարան, 4. կպչուն, 5. պատրանք, 6. դանակ, 7. մանկավարժական, 8. ստորև, 9. նկարակալ:

41 **Նշել այն բառերի համարները, որոնց արմատներից մեկին կարող է միանալ *նիշ* արմատը և բարդ բառ կազմել.**

1. միամտություն, 2. բազմավաստակ, 3. փորձանոթ, 4. մարդանման, 5. ուղեմոլոր, 6. ձողաձուկ, 7. տասնյակ, 8. շարժուձև, 9. այսչափ:

42 **Նշել այն շարքերի համարները, որոնց բոլոր բառերը դերանուններ են:**

1. ոչինչ, ոչ ոք, ոչ, ոչ մի
2. ինքներս, այնքան, ոմանք, ինչպես
3. քանի, քանիերորդ, քանի որ, մի քանի
4. նույնչափ, ինչ-որ, ինչպիսի, նախքան
5. մյուս, որոշ, իրար, ոմն
6. ամեն ոք, ուրիշ, համայն, որևիցե

43 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Մի բան, ինչ ես սիրում էի այդ գեր ու կենսախինդ մարդու մեջ, այն էր, որ երբեք ինձ խրատներ չէր տալիս, որը ինձ համար հազվագյուտ շնորհ էր:

1. **այդ** – ցուցական դերանուն, **սիրում էի** – պարզ բայ, ներգործական սեռ
2. **մարդու** – գոյական, ***ու*** հոլովում, **մեջ** – կապ, հետադրություն
3. **երբեք** – ժամանակի մակբայ, **չէր տալիս** – անկանոն բայ, անկատար անցյալ
4. **հազվագյուտ** – ձևի մակբայ, **շնորհ** – գոյական, ուղղական հոլով
5. **ինչ** – ստորադասական շաղկապ, **ես** – անձնական դերանուն, ուղղական հոլով

44 **Ըստ հերթականության նշե՛ք, թե որ բառահոդվածը ինչպիսի բառարանից է բերված: Բառարանների տեսակներից 2-ը ավելորդ են:**

- {[(իր)ավ]ա (գիտ)}ություն, գ. [գիտ<գետ<գէտ]:
- ԽԵԼՔԻՑ ՀԱՆԵԼ,-1. Ուղիղ ճանապարհից շեղել, վատ խորհուրդներ տալով մեկին գայթակղել: 2. Մոռանալ, հրաժարվել, չհիշել:
- +ՈԼՈՔ, ի-ա՞ *հլ. «ծունկից մինչև կրունկը եղած մասը»: =Բնիկ հայ բառ՝ որ ծագում է հնխ.* oleq-*ձևից (երկրորդ ձայնավորը առաջինի ազդեցությամբ դարձել է* ***ո****):*
- ՄԵԾ, *ա.* 1. Խոշոր, հսկա, աժդահա, ահռելի, ստվար, վիթխարի, *(բրբ.)* ջոջ: 2. Ականավոր, նշանավոր *(մարդ):*

1. բառակազմական
2. դարձվածաբանական
3. հոմանիշների
4. համանունների
5. բացատրական
6. ստուգաբանական

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Անջատման անուղղակի խնդիրը կարող է արտահայտվել միայն բացառական հոլովով:
2. Ուղիղ և անուղղակի խնդիրները կարող են արտահայտվել և՛ հոլովաձևերով, և՛ կապային կապակցություններով:
3. ***«Ջուրն ամբողջովին թրջել էր նրա հնամաշ տրեխները և լցվել գուլպաները»*** նախադասության մեջ կա երկու ուղիղ խնդիր:
4. ***Նվիրել, հանձնել, տալ*** բայերը կարող են միաժամանակ ունենալ թե՛ ուղիղ, թե՛ հանգման անուղղակի խնդիր:
5. Ներգործող խնդիրը դրվում է ներգործական սեռի բայերի պահանջով:
6. Վերաբերության խնդիրը արտահայտվում է միայն կապային կապակցությամբ:

Բ մակարդակ

46 **Ո՞ր շարքում ուղղագրական սխալ *չկա:***

1) չընկնի, անընկճելի, մեղմօրոր, առնչություն
2) անհեթհեթ, հեղեղատ, հեղեղել, հեղհեղուկ
3) արբշիռ, փաղչել, հորձանուտ, տարրալուծել
4) դշխեմ, սրդոդած, տարերք, ընչացք

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ու* ձայնավորի հնչյունափոխություն կա:**

1) բռնազբոսիկ, շրջադարձ, շարակցական
2) ըմպանակ, կպչուն, չվերթ
3) խցանահան, գուժկան, տնկարան
4) մշկենի, նշաձև, մրցագորգ

48 **Ո՞ր շարքում են բառերը դասավորված այբբենական կարգով:**

1) նազելի, նախարար, նախադաս, նախազգացում
2) նեղություն, նենգաբար, նենգամտություն, նենգափոխել
3) մրմունջ, մրջյուն, մրուր, մրցունակ
4) մուրճ, յաթաղան, յուրօրինակ, յոթական

49 **Ո՞ր տարբերակում դարձվածքի սխալ բացատրություն կա:**

1) ***արդար յուղի տեղ ընդունել*** – առանց կասկածելու հավատալ, ***ոտքի տակ ընկնել*** – խանգարել
2) ***ուրբաթը շուտ գալ, քան շաբաթը*** –որոշված գործը խափանող անակնկալ բան պատահել, ***լեզուն կարճ*** –հնազանդ
3) ***տակն ու վրա անել*** – ասվածը սխալ հասկանալ, ***ճանապարհին մնալ*** – գործը անավարտ թողնել
4) ***օձիքը բաց չթողնել*** –մեկից համառորեն պահանջել մի բան անել, ***իրեն հավաքել*** – զգաստանալ

50 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:**

1) երկաթուղի, միջնապատ, զբոսայգի, խորազնին
2) ոսկրախտ, հեռագիր, ինչևէ, գրասեղան
3) ծովափ, սրտակեր, վերադարձ, վազանց
4) մեղմանուշ, երգչախումբ, շուրջպար, ընչազուրկ

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:**

1) տարակույս, դյուրին, կաղին, պահոց
2) տեսուչ, անկյալ, երջանիկ, հայտնապես
3) հեռաստան, խորաքնին, տենչանք, ընտրովի
4) հակադիր, պարագիծ, տանջանք, լծկան

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավանկ:**

1) կարեվեր, ագեվազ, ուսումնատենչ
2) պնդօղակ, սնապարծ, հպանցիկ
3) բարձրուղեշ, հայրենադարձ, հուշարձան
4) հարցասեր, տարեդարձ, խրձաձև

53 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդի գործածություն կա:**

1) Մռայլ խորհրդածությունները թույլ չտվեցին գիշերս աչք փակել:
2) Աչքերիդ փայլից երևում է, որ նպատակդ կատարվել է:
3) Հրաշալի վարդերը ձեռքներիս՝ անհամբեր սպասում էինք օդանավի վայրէջքին:
4) Սեպտեմբերի քսանմեկին հայերս մեծ շուքով տոնեցինք Հայաստանի անկախության պանծալի քսանամյակը:

54 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

1) Վաղ մանկությունից զրկվելով ծնողներից՝ Արսենը մնաց միայնակ, մնաց որբ՝ երբեմն-երբեմն արժանանալով հարևանների կարեկցանքին:
2) Երբ բակ մտա, ինձ այնպես թվաց, թե սպիտակ տան ներսում ինչ-որ մարդիկ են հավաքվել, ու մեկը, իր ափերից դուրս եկած, գոռգոռում է:
3) Ինչպե՞ս եղավ, որ աշխարհը այսպես փոխվեց, ո՞ւր գնացին այն օրերը, երբ սնդուկում զրնգում էր ոսկին:
4) Գարնանը Արաքսը ելնում է իր ափերից՝ վարար ջրերով տիղմ կուտակելով լայն տափարակի վրա:

55 **Ո՞ր նախադասության մեջ սոսկածանցավոր բայ *չկա:***

1) Պղտոր հեղեղի բերանն ընկած տաշեղի պես Լառ-Մարգարը շատ ափերի էր զարկվել, վերջը ալիքը Լառ-Մարգարին իր թոռան հետ գցել էր այդ գյուղը:
2) Կտավատը ժպտում էր կապույտ ծաղիկներով, ծիրանն արդեն դեղնել էր, մասրենու մոտ պառավը կանգնել իրեն էր սպասում:
3) Կարծելով, որ վերջացավ խոսակցությունը պրոֆեսորի հետ՝ ուսանողները վեր կացան հրաժեշտ տալու:
4) Նա անցավ նոր ավարտված մի շենքի առջևից, հետաքրքրությամբ դիտեց շենքը և տեսավ, որ պատերը ներկված են զանազան գույներով:

56 **Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա:***

1) Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել, Ուզում է քնել, հավիտյան քնել:
2) Գուցե Բասուտա գետը, ուրիշ գետի հետ խառնվելով, հասնում է այն ծովին:
3) Պատասխա՛ն տուր ինձ, մատնի՛չ սևաչյա, Սի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն…
4) Նա ուզում էր սխալ լսած լինել, բայց հենց ես էլ հաստատեցի նրա լսածները:

57 **Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

…….ձայներ …….՝ նա շրջվեց ու ……. Սմբատ Բագրատունուն՝ թագադիր ասպետին, որ ……. առույգ, խրոխտ ու պատկառազդու կեցվածքով:

(թիկունք, լսել, տեսնել, առաջանալ)

1) Թիկունքում, լսելիս, կտեսներ, առաջ էր գալիս
2) Թիկունքով, լսողը, տեսել էր, առաջանալու էր
3) Լսելով, թիկունքից, տեսնում էր, առաջ էր գալիս
4) Թիկունքից, լսելով, տեսավ, առաջանում էր

58 **Ընդգծվածներից ո՞րը դերբայական դարձված *չէ* (նախադասությունները կետադրված չեն):**

1) Ծառաները **գլխարկները հանած** խոնարհվեցին մինչև գետին:
2) Ես կախարդ եմ **ապագան գուշակող:**
3) Եվ **կտրուկ շուռ գալով** տեսավ դեպի իր կողմը եկող մարդկանց:
4) Նրան կանչում էր անտառը **խորհրդավոր ձայներով:**

59 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

1) Դրսում ցուրտ էր, և գյուղի փողոցներում ոչ մի մարդ, ոչ մի կենդանի արարած չէր երևում:
2) Ամեն ոք ցանկանում էր հնարավորինս շատ տեղեկություն ստանալ:
3) Պետական բոլոր մուծումները ձեռնարկության կողմից կատարվել է ժամանակից շուտ:
4) Երբ առաջնորդը կամ իշխանները անիրավ ու անհավատարիմ են, զարմանալի չէ, եթե ժողովուրդն էլ ապերախտ լինի:

60 **Ո՞ր տարբերակում է պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

1) *Օրերից մի օր՝ հոյակերտ մի դղյակի մոտով անցնելիս, տեսավ գեղանի արքայադստերը:*
   Երբ օրերից մի օր անցնում էր հոյակերտ մի դղյակի մոտով, տեսավ գեղանի արքայադստերը:
2) *Խելք խելքի տալուց հետո ծնողները համաձայնեցին որդու՝ արտասահման մեկնելուն:*
   Երբ խելք խելքի տվեցին, ծնողները համաձայնեցին որդու՝ արտասահման մեկնելուն:
3) *Թիֆլիսի քաղաքային ինքնավարության մեջ կայացած մի ժողովում պատգամավոր է ընտրվում նաև Շիրվանզադեն:*
   Թիֆլիսի քաղաքային ինքնավարության մեջ կայացած մի ժողովում էր, որ պատգամավոր է ընտրվում նաև Շիրվանզադեն:
4) *Չնայած տարիքով բավական մեծ լինելուն՝ խաղում էր իրենից մի քանի տարով փոքրերի հետ:*
   Թեև տարիքով բավական մեծ էր, խաղում էր իրենից մի քանի տարով փոքրերի հետ:

61 **Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Բոլոր մեկնաբանությունները սակայն կլինեն մտացածին և անէական իսկ հիասքանչ առեղծվածը գոյատևելով կշարունակի ավելի դյութել տղամարդկանց իր անբացատրելիությամբ:
2) Կարելի է տեսնել ներկարարների որոնց բարձրավիզ կոշիկների վրա երևում էին բոլոր ներկերի հետքերը սևից մինչև սպիտակ:
3) Նա խորհրդավոր ժպիտը դեմքին դիմավորեց ամուսնուն սակայն բոլորն էլ լավ հասկանում են թե ինչ էր նա մտածում իրականում:
4) Իմ առջև փռված են հայրենի դաշտերը լուռ խաղաղ ու հարազատ դաշտերը:

62 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն պնդումների համարները, որոնք համապատասխանում են Հ. Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի բովանդակությանը:**

1. Մայր ձին բնազդով վտանգ էր զգացել այն ժամանակ, երբ դեռ թշնամու՝ գայլի ո՛չ հոտն էր զգացվում հովտում, ո՛չ ձայնն էր լսվում:
2. Գայլի կռիվը եսասիրություն էր, իսկ մայր ձիունը՝ անձնազոհություն, քանի որ գայլը կռվում էր իր ստամոքսի համար, իսկ ձին՝ իր ձագուկի:
3. Զգալով, որ շունչը փչում է, մայր ձին մի կողմ է վանում կերակրվելու եկած իր քուռակին և հրաժարվում է կաթ տալուց:
4. Փոքրիկ հովիվը զարմանում է, թե շներն ինչու այդպես արագ թափով պոկվեցին տեղից ու վազեցին դեպի կանաչ հովիտը, քանի որ ինքը գայլի ու ձիու կռիվը չէր տեսել:
5. Շների հայտնվելուց հետո գայլը անմիջապես չի նահանջում և չի հրաժարվում պայքարից, շարունակում է կռիվը արդեն շների դեմ:
6. Կանաչ դաշտում կռվի տեղը՝ սև շրջանակը, տարիների ընթացքում լցվում է կանաչով ու կորչում, և կռվի միակ հետքը մնում է քուռակի ոտքի սպին:

1) 2, 3, 5
2) 2, 4, 6
3) 1, 3, 4
4) 1, 5, 6

63 **Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչն է Շիրվանզադեն:**

1) ռեալիզմի
2) սիմվոլիզմի
3) կլասիցիզմի
4) ռոմանտիզմի

64 **Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածվել.**

մակդիր, շրջադասություն, փոխաբերություն, համեմատություն:

Այնպես գգվող է երեկոն անափ,
Ծաղիկներն այնպես նազով են փակվում,
Շուրջս վառված է մի անուշ տագնապ,
Մի նոր հուզում է սիրտս մրրկում…

65 **Քանի՞ բառազույգեր են իրար հականիշ.**

թոշնել-փթթել, ապառիկ-կանխիկ, տարտարոս-գեհեն, ճաղատ-թավամազ, բանադրանք-օրհնություն, անձուկ-նեղ, գողոն-անթաքույց:

66 **Տրվածներից քանի՞սն են ածականներ.**

աշխատանք, մանուշակ, բարի, հնագույն, աշխատանքային, հմայք, վաղորդայն, արծաթե, պարզ, բռունցք, մոտեցում:

67 **Նշել այն նախադասությունների համարները, որոնց ստորադասի բնույթը սխալ է նշված:**

1. Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակիդ շունչը դարձի՛ր: *(պայմանի պարագա)*
2. Սերը հասկանում է միայն նա, ով դա զգացել է: *(ենթակա)*
3. Ես չեմ ուզում փշրել երազները նրա, ով դեռ հավատում է հեքիաթներին: *(որոշիչ)*
4. Չկա որևէ մեկը, որ աստվածների կողմից առատորեն օժտված լինի ամեն ինչով: *(ուղիղ խնդիր)*
5. Եվ գիշերը, երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիաածածկ ափերի վրա, գաղտնի հեռացավ քաղաքից: *(ժամանակի պարագա)*

68 **Նշել այն բառերի համարները, որոնցում *ո*-ն արտասանվում է *օ*.**

1. անորակ, 2. ամենաորակյալ, 3. նրբաոճ, 4. ծնկոսկր, 5. բախտորոշ, 6. որակազրկել, 7. ողբանվագ, 8. եռոտանի, 9. հայորդի:

69 **Ըստ հաջորդականության՝ նշել, թե որ հատվածը Վ. Տերյանի որ ստեղծագործությունից է:**

- Կար մի երգ հեռավոր աշխարհում,-
  Դու այն երգն ես կրկնում հեռավոր-
  «Ես սիրում եմ, դու ինձ չես սիրում»,
  Եվ հին են քո խոսքերը բոլոր…
- Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,
  Կարոտավառ երազում ենք միշտ իրար…
- Բարբարոսներ շատ կըգան ու կանցնեն անհետ,
  Արքայական խոսքը մեր կըմնա հավետ:
- Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց,
  Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին…

1. «Fatum»
2. «Կարուսել»
3. «Տխրություն»
4. «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին»

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Տալ*** բաղադրիչ ունեցող բոլոր բայերը պատճառական են:
2. Պատճառական ածանց ունեցող բայերի եզակի հրամայականը կազմվում է ***ու***, իսկ հոգնակին՝ ***եք*** վերջավորությամբ:
3. ***Ե*** խոնարհման պարզ և պատճառական ածանց ունեցող բայերի անորոշ դերբայը և վաղակատար ձևաբայը ձևով նույնն են:
4. Պատճառական բոլոր բայերը ներգործական սեռի են:
5. Եթե բայն ունի պատճառական կամ կրավորական ածանց, ապա պատկանում է ***ե*** խոնարհման:
6. Բոլոր բայերից հնարավոր է կազմել պատճառական բայեր ***ացն, եցն, ցն*** ածանցներով: